Զարուհի Ծպնեցյան

1590-1639 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Բանալի բառեր – պատերազմական գործողություններ, բանակ, նվաճել, օսմանյան պետություն, Իրանի շահ, ջալալիների ապստամբություն, հաշտության պայմանագիր:

1590 թ. Կոստանդնուպոլսում կնքված հաշտության պայմանագրով Թուրքիան մասամբ իրագործեց քաղաքական ու տնտեսական իր ծրագիրը՝ զավթելով Անդրկովկասի ու հարավային տարածքների առևտրական կարևորագույն ուղիները: Ֆեոդալական մասնատվածությունից ուժասպառ եղած Իրանը ռազմական ու բարոյական շոշափելի պարտության մատնվեց: Օսմանցի ֆեոդալները բացահայտ սկսեցին կողոպտել նվաճված ընդարձակ տարածքի հարստությունը, նախ և առաջ՝ մետաքսի հումույթը: Բնակչությունը ենթարկվեց ծանր հարկատվության, կեղեքման ու կրոնական հալածանքի: Տեղի ֆեոդալների տիրույթները կամ հափշտակվեցին, կամ նրանց պարտավորեցրին արքունի գանձարանին միանվագ խոշոր վճարումներ կատարել: Այդ բոլորը չէր կարող ընդհանուր դժգոհություն չառաջացնել նվաճողների նկատմամբ և՛ ֆեոդալների և՛ բնակչության շրջանում:

Պարսիկ ֆեոդալները իրենց տիրույթների փրկությունը տեսան Իրանի երիտասարդ շահ Աբաս I-ի (1587-1628 թթ.) ռազմական միջամտության մեջ: Վերջինս Կոստանդնուպոլսի հաշտության պայմանագրի (1590 թ.) կնքումից հետո կարճ ժամանակամիջոցում իր արևելյան թիկունքն ապահովել է ուզբեկների ներխուժման վտանգից, սանձահարել կենտրոնախույս քոչվոր ֆեոդալների մի մասի դիմադրությունը և երկրում իրականացրել ռազմական բարեփոխում՝ վերակառուցելով Իրանի պաշտպանությունը:

Մինչ Իրանում ամրապնդվում էր շահ Աբաս I-ի կառավարությունը, XVI դարի վերջին սուլթանական Թուրքիան անկման նշաններ էր ցույց տալիս: Օսմանյան կայսրության հզորության հիմքը՝ նրա ռազմա-ֆեոդալական կառուցվածքը, ներքին ճգնաժամ էր ապրում: 21-ամյա իշխանության տարիներին Մուրադ III-ի (1574-1579 թթ.) վարած անընդմեջ պատերազմները ծայր աստիճան քայքայել էին երկրի տնտեսությունը, վատթարացել էր ֆինանսական վիճակը: Երկրի ներսում ծայր առած ճգնաժամը, իհարկե, աննկատելի չէր կառավարող թուրք ֆեոդալներին: Ճգնաժամից դուրս գալու ելքը նրանք գտան նոր պատերազմների մեջ եվրոպական ճակատում: Այս պատերազմական գործողությունները, բացի անհաջողությունից, ուրիշ ոչինչ չբերեցին:

1593 թ. Բոսնիայում ամբողջությամբ ոչնչացվեց Հասան փաշայի զորքը: Եթե եվրոպական ճակատում թուրքերը լրիվ չջախջախվեցին, ապա դրա պատճառը Գեր-

մանիայում ծայր առած կրոնական ներքին վեճերն էին: Այդ հանգամանքը թույլ չտվեց օսմանցիների դեմ ընդհանուր հարձակում կազմակերպել:

Վերջ ի վերջո խռովության ալիքը բարձրացավ և օսմանյան պետության ներսում: Երկրում ծայր առած ջալալիների հզոր ապստամբությունը կաթվածահար արեց օսմանյան պետության քաղաքական և ռազմական ապարատը և վճռական դեր խաղաց նրա անկման գործում:

Ջալալիների ապստամբությանը հետևեց 1600 թ. կայսրության մայրաքաղաքում բռնկված սիփահիների ապստամբությունը:

Շահ Աբասը ուշի-ուշով հետևում էր Թուրքիայում տեղի ունեցած իրադարձություններին՝ տեղեկություններ հավաքելով ամենքից և իր մոտ ապաստանած ֆեոդալներից: Խորամանկ շահը,- գրում է պատմագիր Առաքել Դավրիժեցին,- «...սնոտի ու պատիր խաբեութեամբ» բարեկամ ձևանալով իրեն իր մոտ ապաստանած ֆեոդալներին, «...զամենայն խորհուրդս սրտից նոցա յինքն գողացաւ, և զամենայն որպիսութիւն աշխարհաց նոցա զել և զմուտ և զաշխարհակալ արանց իմացաւ»[1]:

Այս տեսակետից ուշագրավ է Առ. Դավրիժեցու մեջ բերած Զուլֆիղար խանի դիմումը Նախիջևանում պաշարված օսմանյան կայազորին: Շահ Աբասի այդ զորավարը հորդորելով կայազորին անձնատուր լինել՝ ասում էր, որ պաշտպանությունը զուր է, որովհետև գալիս է «ինքնակալ թագավորը բազում զօրոք» և խնդրում է «զհայրենի աշխարհն իւր»[2]:

Շահին մնում էր միայն պատերազմի առիթը, որը շուտով ներկայացավ: Դժգոհ օսմանցիների տիրապետությունից՝ Սալմաստի բեկ քուրդ Ղազին ապստամբում է օսմանցիների դեմ և շահի օգնությանը դիմում՝ հորդորելով նրան շարժվել դեպի Թավրիզ ու սկսել պատերազմ օսմանցիների դեմ: Օգտագործելով ստեղծված հարմար առիթը՝ 1603 թ, սեպտեմբերի 14-ին Շահ-Աբասը մի քանի հազար զինվորների գլուխ անցած՝ Սպահանից սրընթաց շարժվում է դեպի Թավրիզ և, չնայած թուրքերի շուրջ երեք շաբաթ տևած դիմադրությանը, գրավում է այն: Պարսկական բանակը միաժամանակ արշավում է Նախիջևանի ուղղությամբ: Տեսնելով, որ անհնարին է կասեցնել դեպի Նախիջևան արշավող պարսկական բանակի սրընթաց առաջխաղացումը, օսմանցիները «...ինչ և կարացին կողոպտել ի մերձակայ գեղօրէիցն կողոպտեալ աւարացին՝ և ժողովեցան ի Նախչուան»[3]: Նախիջևանի անկմանը հետևում է Երևանի պաշարումն ու գրավումը պարսիկների կողմից (1604 թ. մայիսի 28-ին):

Երևանի բերդի գրավումից հետո շահը ասպատակեց Սևանա լճի, Շիրակի ու Լոռու շրջանները՝ անխնա թալանելով ու բռնություններ գործադրելով բնակչության նկատմամբ: Նախավկայի վանքում գրված մի հիշատակարանում կարդում ենք. «Ի դառն և ի նեղ ժամանակին, որ որդի Խուտաբանտային երեկ Սպահանայ... գերեաց զազգն քրիստոնէից և խիզանն հայկական ազ-գին որպէս գառինս վաճառէին միմեանց և... անմեղ մարդիկ կոտորեցին և շատ անմեղ տղայք ի գրկից

[1] Պատմութիւն Առաքելայ վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ18:
[2] Նույն տեղում, էջ 23:
[3] Տե՛ս Պատմութիւն Առաքելայ վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ18:

մաւրն խլէին... զազգն Հայոց վաճառին»[1]:

Թշնամու անակնկալ հարձակումներից իր թիկունքն ամրապնդելու համար շահն այդ նույն ժամանակ զորքերն ուղարկում է Անդրկովկասի այլ և այլ վայրեր՝ նվաճումների ու ավարառության: Այսպես, նա Ամիրգունա խանին ուղարկում է Գանձակ, որը «...ուր եվ կարաց հասանիլ, հրոյ ճարակ տուեալ և սրոյ մաշեալ, զորս կոտորեաց և զորս աւարեալ գերեաց աղխիւք և ընտանեօք և բերեալ էած յԵրևան ի լիութիւն և ի յղփութիւն բանակին պարսից»[2]:

Այնուհետև շահը հրամայեց իր զորավարին ասպատակել և ավերել Արևմտյան Հայաստանի գավառները և բնակչությանը ձմռան սաստիկ օրերին բռնի տեղափոխել Արարատյան դաշտավայր: Արարատյան դաշտ քշված բնակչության թիվը մի հիշատակարանում հաշվվում է 60000 մարդ՝ առանց սպանվածների և մահացածների [3]:

Այս բոլոր իրադարձությունները տեղի էին ունենում սուլթան Մուհամեդ III-ի թագավության օրոք: Իսկ երբ իշխանությունն անցավ նրա հաջորդ սուլթան Ահմեդի ձեռքը, նա հսկայական բանակով պատերազմ ուղարկեց ծագումով իտալացի Ջղալ օղլի Սինան փաշային: Սինան փաշայի զորքերի թվական գերակշռության առաջ շահ Աբասը ստիպված եղավ նահանջել՝ հրաման արձակելով բռնի տեղահանված ու Արարատյան դաշտավայրում հավաքված հայերին և տեղացիներին բռնի քշել Պարսկաստան: Այդ հրեշավոր հրամանը շուտով ի կատար ածվեց: Իր զարհուրելի մտադրությունն իրականացնելու համար շահը դիմեց խորամանկության: Նա իր մոտ կանչեց «զմեծամեծս երկրից հայոց», ինչպես գրում է Առ. Դավրիժեցին, հորդորելով նրանց համաձայնվել ժամանակավորապես տեղափոխվել Պարսկաստան՝ օսմանյան զորքերի ասպատակություններից զերծ մնալու համար: Իրականում շահի ռազմավարական նպատակն էր ամայացնել երկիրը, որտեղից պիտի անցներ օսմանյան բանակը և որ գլխավորն է՝ բռնի տեղահանվող բնակչությանը ծառայեցնել Իրանի տնտեսության ու առևտրի զարգացմանը: Առաքել Դավրիժեցին այսպես է բացատրում այդ բռնի տեղահանության պատճառը. «Զի եկեալ օսմանցւոցն անբնակ գտանիցեն զերկիրն ի մարդկանէ: Եւ ոչ գտցի կերակուր և ռոճիկ և այդ ինչ պիտոյք նոցա՝ և անասնոց նոցա, և առ ի չգոյէ հարկաւորաց վտանգեսցին զօրքն օսմանցւոց: Նաև ժողովուրդքն լինիցին նմա անզերծանելի հարկատու՝ ծառայք. և հողագործք մինչև ցյաւիտեան»[4]:

Հետագայում Անդրկովկասի երկրներից բնակչության բռնի տեղահանումը շարունակվեց մինչև իսկ 1612 թ. ժամանակավոր զինադադարը: Հենվելով այս փաստի վրա՝ Ի. Պ. Պետրուշևսկին գալիս է այն եզրակացության, որ բռնի տեղահանումը առավելապես նպատակ ուներ գյուղացիներին ամրացնել հողին և առավելագույն չափով շահագործել նրանց[5]:

Տեղահանումը ոչ միայն մարդկային մեծ զոհեր պատճառեց, այլև ամայի դարձրեց երկիրը: Հայազուրկ դարձան Հայաստանի շատ գավառներ, մանավանդ Այրարատը:

---

[1] Տե՛ս Հովհաննիսյան Ա.Գ. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատ. 2, Երևան, 1959, էջ 83:

[2] Տե՛ս Պատմութիւն Առաքելայ վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 27:

[3] Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր N5315, էջ 208:

[4] Պատմութիւն Առաքելայ վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ38:

[5] Տե՛ս И. П. Петрушевский. Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI- нач. XIX вв., Ленинград, 1948г., с. 242:

Պատերազմական գործողությունները վերսկսվեցին այն բանից հետո, երբ Սինան *փաշան* Դիարբեքիրից 1605 թ. օգոստոսին շարժվեց դեպի Սալմաստ ու Խոյ: Ուրմիո լճի մոտերքում տեղի ունեցավ մեծ ճակատամարտ: Պարսկական բանակը ղեկավարում էր ինքը՝ շահը: Ճակատամարտը վերջացավ օսմանցիների պարտությամբ:

1607-1608 թթ. ջալալիների նոր ապստամբությունները Թուրքիայի ասիական մասերում օսմանցի ֆեոդալներին հնարավորություն չտվեցին պատերազմական նոր գործողություններ ձեռնարկել սեֆեվիների դեմ: Միայն 1603 թ. վերջերին, երբ հիմնականում ճնշվեց ջալալիների ապստամբությունը մեծ վեզիր Կույուջու Մուրադ փաշայի կողմից, սուլթանական Թուրքիան հնարավորություն ստացավ մտածելու պարսկական ճակատի մասին:

1610 թ. գարնանը մեծ վեզիր Կույուջու Մուրադը բանակի գլուխ անցած՝ Էրզրում-Չալդրան-Խոյ-Սամաստ ճանապարհով շարժվեց գեղի Թավրիզ: Սակայն շահի առաջարկով մի շարք բանակցություններից հետո միայն օսմանյան բանակը հետ նահանջեց դեպի Դիարբեքիր:

1611 թ. նոյեմբերի 20-ին կնքվեց հաշտության նոր պայմանագիր արևելյան այդ երկու պետությունների միջև: Հաշտության համար հիմք ընդունվեց 1555 թ. սուլթան Սուլեյմանի և շահ Թահմասպի միջև Ամասիայում կնքված պայմանագիրը:

Այսպիսով, Թուրքիան հրաժարվում էր Մուրադ III-ի օրոք Անդրկովկասում կատարած իր նվաճումներից՝ Պարսկաստանին թողնելով Ադրբեջանը, Արևելյան Հայաստանն ու Արևելյան Վրաստանը: Իրանը պատրաստվում էր տարեկան 200 բեռ մետաքս հանձնել Թուրքիային որպես հարկ, որից սակայն շուտով հրաժարվեց:

Այսպիսով, հաշտության պայմանագրով Թուրքիան ճանաչում էր իր պարտությունն Իրանից: Նա ստիպված էր այդ քայլին դիմելու, որովհետև Ասիայի ապստամբությունների կործանիչ հետևանքները օսմանյան քաղաքականությանը նոր ուղղություն էին տվել և ստիպել Հունգարիայի և Պարսկաստանի հետ հաշտություն կնքել: Կնքված հաշտության պայմանագիրը կրում էր ժամանակավոր բնույթ: Ո՛չ օսմանյան Թուրքիան էր ուզում հաշտվել Անդրկովկասի կորստի հետ և ո՛չ էլ Սեֆյան Իրանը՝ իր համար ստորացուցիչ մետաքսահարկ վճարելու գաղափարով: Իրոք, Իրանը հաշտության պայմանագրի կնքումից հետո, ինչպես ասվեց, դադարեցրեց Թուրքիային տարեկան 200 բեռ մետաքս ուղարկել: Դա առիթ դարձավ պատերազմական նոր գործողությունների:

1616 թ. գարնանը օսմանյան 100 հազարանոց բանակը Հալեպից Հասանկալա-Սողանլու ճանապարհով շարժվեց դեպի Կարս, ապա Երևան, որի բերդի անհաջող պաշարումից հետո օսմանյան բանակը ստիպված Կարսի վրայով քաշվեց դեպի Էրզրում: Օսմանյան բանակի հրամանատար Կարա-Մահմեդ փաշան վերահաստատեց 1611 թ. հաշտության պայմանագիրը: Իրանը կտրականապես հրաժարվում է մետաքսի հարկը: Այդ պատճառով սուլթան Ահմադը չեղյալ է համարում հաշտության վերակնքումը և պարսկական ճակատ է ուղարկում մեծ վեզիր սարդար, ծագումով հայ, Խալիլ փաշային: Օսմանյան բանակում գտնվող Ղրիմի թաթարական խան Ջանիբեկ Գիրեյը 40 հազարանոց զորքով ասպատակում է Գյանջան, Նախիջևանը և Ջուլֆան՝ իր շրջակայքով:

1618 թ. սեպտեմբերի 10-ին Փուլի Շիքեստե կոչված վայրում թաթարական խանը և օսմանյան բանակի մի մասը պարտվում պարսիկներից՝ կրելով ծանր կորուստ-

ներ:

Պարտության լուրը ստանալով՝ Խալիլ փաշան որոշում է շարժվել դեպի Արդաբիլ և ստիպել շահին կնքել նոր հաշտություն, որը և իրականացվում է 1618 թ. սեպտեմբերի 26-ին: Այդ հաշտությունը ևս երկար չտևեց: Վերսկսված պատերազմական գործողությունների համար այս անգամ թատերաբեմ դարձավ Միջագետքը: Օգտագործելով Բաղդադի թուրքական կայազորի հրամանատար Բեքիր փաշայի դավաճանությունը՝ շահ Աբասը շուտով գրավեց Բաղդադը:

Էրզրումի շրջանում Աբազա փաշայի ապստամբության նոր պոռթկումները (1623-1627 թթ.), Եգիպտոսում ծայր առած ընդվզումները, պարսկական բանակի առաջխաղացումը Միջագետքում կաշկանդում էին Թուրքիային՝ ձեռնարկելու պատերազմական գործողություններ Իրանի դեմ՝ Անդրկովկասին տիրելու համար:

Այնուամենայնիվ, 1635 թ. գարնանը սուլթան Մուրադը հսկայական բանակի գլուխ անցած շարժվեց դեպի Արևելք: Հայաստանի տարածքում խոշոր մասշտաբի պատերազմական գործողություններ սկսվեցին 1635-1636 թթ.: Այդ ընթացքում թուրքերն ունեցան ժամանակավոր հաջողություններ՝ կապված մասնավորապես Երևանի բերդի գրավվման հետ (թեպետ այնուհետև գահ բարձրացած շահ Աբասի թոռ՝ շահ Սեֆին տևական պաշարումից հետո 1636 թվականի մարտի 30-ին գրավեց այն):

1637-1638 թթ. պատերազմական գործողությունների թատերաբեմը կրկին տեղափոխվեց Միջագետք, որի հետևանքով Բաղդադը վերջնականապես ընկավ թուրքերի ձեռքը: Բաղդադի գրավումից հետո երկու պատերազմող երկրների միջև սկսվեցին հաշտության նոր բանակցություններ, որի հետևանքով 1639 թ. մայիսի 17-ին կնքվեց հաշտության պայմանագիր Կասրե Շիրինում: Ըստ այդ պայմանագրի՝ Հայաստանը վերաբաժանվեց Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև: Արևելյան Հայաստանը Արարատյան նահանգով, համաձայն պայմանագրի, մնաց Պարսկաստանին, իսկ Բաղդադն ու Արևմտյան Հայաստանը անցավ Թուրքիայի տիրապետության տակ: Այս բաժանումն անփոփոխ մնաց մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, այսինքն՝ 1828 թվականը:

1639 թվականի հաշտությամբ Հայաստանում համեմատաբար երկարատև խաղաղություն հաստատվեց և վերջ տրվեցին թուրք-պարսկական պատերազմներին: Ստեղծվեցին որոշ խաղաղ պայմաններ Հայաստանի տնտեսության, նախ և առաջ գյուղատնտեսության վերականգնման համար:

Заруи Цпнецян, Турецко-персидские войны (1590-1639 гг.) и Армения, - По Константинопольскому мирному договору (1590 г.), Ирану был нанесен ощутимый удар. Согласно договору, Армения попала под турецких завоевателей.

В начале XVII века, используя ослабление Османской империи Шах Абас начал новые военные действия против Турции, чтобы вернуть обратно области, захваченные Турцией по мирному договору (1590г.). В результате захвата Армении шах был вынужден под натиском огромной турецкой Армии отступить. По приказу шаха подлежали выселению в Иран около 350 тыс. армян.

В 1639 г. между Ираном и Турцией был заключен мирный договор, согласно

которому снова был подтвержден раздел Армении, произведенный в 1555 году по Амасийскому договору.

Zaruhi Tspnetsyan, Turkish-Persian wars (1590-1639) and Armenia, - Under the Peace Treaty of Constantinople (1950), Iran incurred a significant damage. According to the Treaty, Armenia fell under the rule of Turkish conquerors.

At the beginning of the 17th century, taking advantage of the weakening of the Ottoman Empire, Shah Abbas initiated new military operations against Turkey to return the territories occupied by Turkey under the Peace Treaty (1590). Following the conquest of Armenia, Shah had to retreat under the pressure of the huge Turkish army. According to the decree of Shah, around 350,000 Armenians were to be evicted to Iran.

In 1639, Peace Treaty was concluded between Iran and Turkey, according to which division of Armenia under Amasia Treaty of 1555 was again confirmed.

Զարուհի Ծպնեցյան – Երևանի թիվ 139 ավագ դպրոցի «Հայ ժողովրդի պատմության» ուսուցչուհի: